**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/2 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Դովեղի միջնակարգ դպրոցի կառուցման մնացորդային աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 10.02.2026թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Նալբանդյան
Անդամներ՝ Էդ. Առուստամյան
Ն. Փինաչյան
Ս. Նունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Հյուսիսյանը

## 1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման մասին

(Ա. Նալբանդյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակից Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

## 2. Տվյալներ ընտրված մասնակցի վերաբերյալ

(Ա. Նալբանդյան)

2.1 Հիմք ընդունելով գնման ընթացակարգի մասնակից Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ վերջինիս հայտը գնահատվել է բավարար:

2.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետի, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա մասնակցի հայտը գնահատվել է հետևյալ կերպ՝

| Մասնակցի զբաղեցրած տեղ | Մասնակցի անվանում | Գնահատման արդյունքում ստացած միավոր |
|---|---|---|
| **Ընտրված մասնակից** | **Վահրամ Կնյազյան Ա/Ձ** | **86.9** |

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Ա. Նալբանդյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Նալբանդյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------- Ա. Նալբանդյան

Անդամներ՝ ---------- Էդ. Առուստամյան

---------- Ն. Փինաչյան

---------- Ս. Նունյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան